ՌԻՉԱՐԴ ՌՈՐՏԻՆ ՈՐՊԵՍ «ՈՒՂՂՈՐԴՈՂ» (EDIFYING)[1] ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՁԱՏԱԳՈՎ

Փիլիսոփայական մտքի զարգացումը հանգեցրեց նրան, որ XIX-րդ դարի երկրորդ կեսից փիլիսոփայության դաշտում հայտնվեցին բազմաթիվ ու բազմապիսի դպրոցներ, որոնք իրենց առաջնակարգ խնդիրներից մեկը համարեցին վերանայել փիլիսոփայական մտքի տարածման սահմանները և նորովի մեկնաբանել փիլիսոփայությունը, ճշգրտել փիլիսոփայության առարկան և ուսումնասիրության ոլորտը: Այս տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում տվյալ հիմնահարցի քննարկման այն ուղղությունը, որտեղ հանդիպում ենք դասական փիլիսոփայության քննադատությանն ու մերժմանը: Այստեղ փիլիսոփայության իմաստն ու նշանակությունը հանգեցվում է նպատակների և արդյունքների վեր հանմանը, ինչն էլ ստիպում է օգտապաշտական մոտեցում ցուցաբերել և փիլիսոփայությանը վերաբերվել որպես միջոցի: Նորագույն շրջանի մտածող Ու.Ջեյմսը, գտնում է, որ փիլիսոփայության ֆունկցիան պարզելն է, թե ինչ տարբերություն կլինի, եթե ճշմարիտ համարվի այս և ոչ այն տեսությունը[2]: Հետզհետե փոխվում են փիլիսոփայության նպատակները, հետևաբար՝ նաև նշանակությունը: Փիլիսոփայությունը դառնում է «գործիք», որը կոչված է ծառայելու ոչ թե իրերի ու երևույթների խորքային իմաստի վեր հանմանը, և ճշմարտությանը հասու դառնալու համար համապատասխան մտածողության ձևավորմանը, այլ ընդամենը «տեսությունների հարմարավետության» աստիճանը որոշելուն[3]:

Հետարդիականության խոշորագույն ներկայացուցիչ Ռ.Ռորտին ժամանակակից փիլիսոփայությունը ներկայացնում է որպես փիլիսոփայություն առանց էպիստեմոլոգիայի, քանի որ մարդկության առջև այսօր ծառացած խնդիրները հնարավոր չէ լուծել էպիստեմոլոգիայի միջոցով: Հիմնավորումը, որը դասական փիլիսոփայության հիմնարար հասկացություններից մեկն է հանդիսանում, չի արդարացնում իրեն, երբ փիլիսոփայական դաշտից տեղափոխվում է մշակույթի այլ բնագավառներ: Կարելի է հանդիպել այն նկարագրությանը, որտեղ «հիմնավորման նախագիծը դիտվում է որպես անվակ, որը

---

[1] *R. Rorty*, Philosophy and the Mirror of Nature, Princeton University Press, Princeton, New Jersey,1979, p.365.

[2] Տե՛ս, *Б.Рассел*, История западной философии, Новосибирск, 2001.

[3] Տե՛ս, *У. Джеймс*, Что такое прагматизм?, Вестник Московского Университета, серия 7, Философия №3, 1993.

մեխանիզմում դեր չի խաղում»[4]: Արդի դարաշրջանին համապատասխան փիլիսոփայության՝ այսինքն, ըստ Ռորտիի, «ուղղորդող» փիլիսոփայության էությունը կայանում է ոչ թե օբյեկտիվ ճշմարտության որոնման, այլ զրույցի շարունակման մեջ[5]: Ժամանակակից մտածողը տարբերակում է «ուղղորդող» (edifying) և «համակարգային» (systematic) փիլիսոփայություններ: Փիլիսոփաների բաժանումը «համակարգայինների» և «ուղղորդողների» չի համապատասխանում «նորմալ» և «հեղափոխական» փիլիսոփաների բաժանմանը (վերջինս բխում է Կունի՝ «նորմալ» և «հեղափոխական» գիտությունների բաժանումից[6]): Ռորտին այդ բաժանմանն է դիմում հեղափոխական փիլիսոփաների տարբերակման համար:

Ցանկացած բավականաչափ ռեֆլեկտիվ մշակույթում կան մարդիկ, ովքեր առանձնացնում են մի բնագավառ, կենսափորձերի մի բազմություն, որը դիտում են որպես մարդկային գործունեության պարադիգմա և փորձում են ցույց տալ, թե ինչպես տվյալ մշակույթը կարող է շահել այդ օրինակից: Արևմտյան փիլիսոփայական ավանդույթի հունի մեջ, Ռորտիի պնդմամբ, դա ճանաչման պարադիգման է՝ հիմնավորված ճշմարիտ համոզմունքների, կամ ավելի ստույգ, այնպիսի համոզմունքների տիրապետման պարադիգման, որոնք ներքուստ այնչափ համոզիչ են, որ հիմնավորումը դառնում է ոչ անհրաժեշտ:

Ժամանակակից փիլիսոփայության պատմության «ծայրամասում» կարող ենք նկատել կերպարներ, որոնք իրենք ավանդույթի հիմնադիրներ չեն հանդիսանում, սակայն միմյանց նմանվում են այն պատկերացման հանդեպ անվստահությամբ, ըստ որի մարդու էությունը կայանում է էությունների ճանաչման մեջ:

Փիլիսոփաները, որոնք ներգրավվում են «հիմնական հունի» մեջ, կոչվում են «համակարգայիններ», իսկ «ծայրամասային» փիլիսոփաները Ռորտիի մոտ ստանում են «ուղղորդողներ» անվանումը: Վերջիններս սկեպտիկորեն են վերաբերվում «համակարգային փիլիսոփայությանն» ու համընդհանուր համաչափելիության նախագծին: Նրանց անվստահության կիզակետում է հայտնվում դասական փիլիսոփայության կենտրոնական օղակ հանդիսացող էպիստեմոլոգիան: Սակայն «հեղափոխական-ուղղորդողների» կողմից էպիստեմոլոգիայի հերքումը կանգնեցնում է նրանց դժվարության նոր պատնեշի առջև. լրացնել այն բաց տարածությունը, որն առաջ է եկել էպիստեմոլոգիայից հրաժարվելու հետևանքով: Քննադատելով լրացման բազմապիսի փորձերը՝

---

[4] *Р.Рорти*, Прагматизм, релятивизм и иррационализм. //В кн. Хрестоматия по истории философии. Западная философия, М.,1997, с.488.

[5] Տե՛ս, *Р.Рорти*, Философия и зеркало природы, Новосибирск, 1997.

[6] Տե՛ս, *Т. Кун*, Структура научних революций, М.: Прогресс, 1977.

ամերիկացի մտածողը իր հայացքն ուղղում է հերմենևտիկային, սակայն հենց սկզբից էլ հարկ է համարում նշել, որ վերջինս իր կողմից չի առաջադրվում որպես «էպիստեմոլոգիայի ժառանգորդ», որպես որոշակի գործունեություն, որը կլրացնի էպիստեմոլոգիապես կողմնորոշված փիլիսոփայության տեղեւմ գոյացած մշակութային ազատ տարածքը: Նրա մեկնաբանմամբ հերմենևտիկան գիտակարգի անուն չէ, ոչ էլ այնպիսի արդյունքների հասնելու մեթոդ է, որոնք չէին կարող ստացվել էպիստեմոլոգիայի միջոցով, և նույնիսկ հետազոտությունների ծրագիր չէ: Հետաքրքրական է, որ հերմենևտիկան այստեղ *հույսի արտահայտում է*, հուբյս, որ էպիստեմոլոգիայի վախճանից առաջացած մշակութային ազատ տարածությունը չի լցվի, որ մեր մշակույթը կդառնա այնպիսին, որում հակադրման ու դիմագրավման պահանջներ այլևս չեն դրվի: Պատկերացումը, համաձայն որի գոյություն ունի մշտական չեզոք հիմնակմախք, որի կառուցվածքը կարող է արտահայտել փիլիսոփայությունը, մի պատկերացում է, որտեղ օբյեկտները հակադրվում են մտքին կամ որտեղ հետազոտությունն արգելակող կանոնները բոլոր դիսկուրսների համար ընդհանուր են, կամ, եթե ոչ բոլոր, ապա ընդհանուր են գոնե մի որևէ կոնկրետ թեմայի առնչվող յուրաքանչյուր դիսկուրսում: Էպիստեմոլոգիայի հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ տվյալ դիսկուրս բոլոր ներդրումները համաչափելի են, ինչի դեմ էլ հենց պայքարում է հերմենևտիկան:

«Համաչափելիությունը» հասկացվում է որպես կանոնների միևնույն բազմությանը ենթարկվելու հնարավորություն՝ կանոններ, որոնք հայտնում են, թե ինչպես ռացիոնալ համաձայնությունը կարող է հասանելի լինել այնտեղ, որտեղ պնդումները կոնֆլիկտի մեջ են մտնում: Ռորտին չի օգտագործում համաչափելիության այն իմաստը, ըստ որի տերմիններին վերագրվում է միևնույն նշանակությունը: Նրա կարծիքով, վեճն այնքան էլ չի հեշտանում, երբ հակասությունների առաջացումը փորձում են բացատրել տերմինների տարբեր կերպ օգտագործմամբ, եթե ընդունենք «միևնույն նշանակություն» հասկացության բեկունությունը: Էպիստեմոլոգիայի ստեղծումը կապված է որքան հնարավոր է շատ ընդհանուր հիմքերի հայտնաբերման հետ, իսկ այդպիսի ընդհանուր հիմքերի բացակայության ենթադրությունը վտանգի է ենթարկում ռացիոնալությունը: «Համաչափելիության անհրաժեշտությանը կասկածել նշանակում է առաջին քայլն անել դեպի վերադարձ բոլորի պայքարին բոլորի դեմ»[7]: Ինչպես Գադամերն է նշում «Ճշմարտություն և մեթոդ» աշխատության մեջ սոցիալ-պատմական աշխարհի ճանաչողության վերաբերյալ, նպատակը կոկրետ երևույթի ներկայացումը չէ, որպես ընհանուր կանոնը լուսաբանող դեպք: «Եզակին չի հանդիսանում պրակտիկ հանգամանքներում կանխագուշակումներ թույլատրող օրինաչափության պարզ հաստատում: Հակառակը,

[7] *Р.Рорти*, Философия и зеркало природы, с.234.

իդեալը պետք է լինի բուն երևույթի հասկացումն իր միապատիկ և պատմական կոնկրետության մեջ»[8]:

Ռորտիի փիլիսոփայության շրջանակներում որոշիչ դեր է հատկացվում «բանավեճային երանգով հերմենևտիկայի» այն տեսակին, որն ավանդույթի ապակառուցման փորձերի համար ընդհանուր է հադիսանում Հայդեգերի և Դերիդայի տեսություններում: Դրանով է բացատրվում ժամանակակից մտածողի ակնհայտ ուշադրությունը «դիսկուրս» հասկացությանը: Հերմենևտիկայի կարևորությունը հիմնավորելու համար Ռորտին տարբերակում է «նորմալ» և «անորմալ» դիսկուրսներ: Վերջիններիս միջև տարբերությունը կարծես ընդհանրացնում է Կունի՝ «նորմալ» և «հեղափոխական» գիտությունների միջև դրվող տարբերությունը[9]: «Նորմալ» դիսկուրսն իրականանում է բոլորի կողմից ընդունված համաձայնությունների բազմության շրջանակներում՝ համաձայնություններ այն մասին, թե ինչը համարել գործին վերաբերող դիտարկում, ինչը համարել հարցի պատասխան, ինչը համարել այդպիսի պատասխանի օգտին պիտանի փաստարկ կամ դրա հիմնավորված քննադատություն: «Անորմալ» դիսկուրսի հանդիպում ենք այն ժամանակ, երբ կողմերից մեկը միանում է դիսկուրսին՝ չիմանալով այդ համաձայնությունների մասին կամ դրանց վրա ուշադրություն չդարձնելով: «Անորմալ» դիսկուրսի արդյունքը, Ռորտիի պնդմամբ, կարող է լինել ամեն-ինչ՝ կատարյալ անհեթեթությունից մինչև ինտելեկտուալ հեղափոխություն, և ոչ մի գիտակարգ չի կարող նկարագրել այն, ինչպես չի կարելի նկարագրել անկանխատեսելին կամ «ստեղծագործականը»[10]: «Նորմալ» և «անորմալ» դիսկուրսները համապատասխանաբար ունեն առաջինը էպիստեմոլոգիական, երկրորդը հերմենևտիկական երանգներ: Սակայն, մտածողը կոչ է անում ցանկացած քննարկման և զրույցի մոտենալ հերմենևտիկորեն: Հերմենևտիկան տարբեր դիսկուրսների միջև հարաբերությունները դիտում է որպես հնարավոր զրույցում խնդրի մասերի միջև հարաբերություններ՝ զրույց, որը չի ենթադրում զրույցի մասնակիցներին միավորող գիտակարգային թվամայր, սակայն որտեղ փոխադարձ համաձայնության հույսը չի մարում, քանի դեռ ընթանում է զրույցը: Դա մինչ այդ գոյություն ունեցող ընդհանուր հիմքի բացահայտման հույս չէ, այլ ուղղակի համաձայնության հույս է, կամ, ծայրահեղ դեպքում, հուզիչ ու բեղմնավոր տարաձայնության: Որպեսզի զրույցը լինի արգասաբեր, հերմենևտիկական մոտեցմամբ առաջարկվում է նախ և առաջ ազատվել այն հայացքից, համաձայն որի գոյություն ունի տերմինների հատուկ բազմություն, և վերջինիս շրջանակներում պետք է տեղավորել, թարգմանել զրույցների բոլոր հնարավոր արդյունքները,

---

[8] *Х.-Г. Гадамер*, Истина и метод, М.: Прогресс, 1988, с.45.
[9] Տե՛ս, *Т. Кун*, Структура научних революций.
[10] Տե՛ս, *Р.Рорти*, Философия и зеркало природы.

որպեսզի համաձայնությունը հնարավոր դառնա: Խնդիրը ոչ թե թարգմանության, այլ զրուցակցի լեզուն յուրացնելու մեջ է: Իր իսկ տերմինաբանությամբ. «ճանաչողության հերմենևտիկական տեսակը» կամ հասկացումը նման է մարդու հետ աստիճանաբար ծանոթությանը, իսկ «անորմալ դիսկուրսը»՝ անծանոթների հետ զրույցի մեջ մտնելուն:

Մշակույթների երկխոսությանն անդրադառնալիս շատ ավելի ակնհայտ է դառնում հերմենևտիկական մոտեցման անհրաժեշտությունը: Խոսելով մշակույթի մասին՝ Ռորտին այն ևս դիտում է որպես զրույց: Մենք չենք կարող հասկանալ օտար մշակույթի, կենսափորձի, տեսության, լեզվի մասերը մինչև ինչ-որ բան չիմանանք նրա ամբողջական գործունեության մասին, և միևնույն ժամանակ մենք չենք կարող ըմբռնել ամբողջի աշխատանքը՝ չհասկանալով նրա մասերը: Մշակութաբանական գրականության մեջ օտար մշակույթի դրսևորումներն ավելի լավ ճանաչելու համար առաջարկվում է դրանք դիտել հենց այդ մշակույթի շրջանակներում, այլ ոչ սեփական, այսինքն՝ դրսևորել ավելի շատ էմպատիա, քան սիմպատիա[11]: Տարբերությունը նրանում է, որ սիմպատիայի ժամանակ մենք մեզ մտովի դնելով ուրիշի տեղը՝ օգտագործում ենք սեփական միջոցները դիմացինի վարքի մեկնաբանման համար: Այսինքն՝ անծանոթի հասկացման համար վերջինս ենթարկվում է ծանոթ լեզվով թարգմանության և դիմացինի վարքը դիտարկվում է սեփական տեսանկյունից: Իսկ էմպատիայում պահանջվում է չափազանց մեծ զգայունակություն օտարի հանդեպ: Այն հիմնված է ուրիշի աչքերով աշխարհին նայելու ունակության վրա: Միջմշակութային հաղորդակցման, ինչպես և ցանկացած զրույցի հաջողության գրավականը էմպատիկ մոտեցումն է, այսինքն՝ մտավոր, ինտելեկտուալ և էմոցիոնալ ներթափանցումն ուրիշի ներաշխարհ՝ նրա զգացմունքների, մտքերի, սպասումների ու ձգտումների համակարգ:

Էպիստեմոլոգիան զրույցի մասնակիցներին դիտում է որպես մարդկանց, որոնք միավորված են ընդհանուր նպատակին հասնելու հարցում փոխադարձ հետաքրքրություններով: Իսկ հերմենևտիկան նրանց վերաբերվում է որպես մարդկանց, *որոնց կյանքի ուղիները խաչվել են* ՝ խումբ, որը միավորված է ավելի շուտ քաղաքավարությամբ. քան ընդհանուր նպատակով, և իհարկե, ոչ երբեք ընդհանուր հիմքով: Այստեղ, պատահականության տարրի ներմուծմամբ կարծես թե հեղինակի կողմից փորձ է արվում ազատության մղել՝ ծերբազատել զրույցի նմանվող հետազոտության մասնակիցներին ամեն տեսակ կաշկանդող կապանքներից՝ լինեն դրանք աքսիոմներ, նորմեր, թե «ընդհանուր հիմք»:

Հերմենևտիկայի և էպիստեմոլոգիայի փոխհարաբերության քննարկման տարածված եղանակը կայանում է այն ենթադրության մեջ, որ նրանք

---

[11] Տե՛ս, "Основы межкультурной коммуникации", под ред. А.П.Садохина, М., 2002.

պետք է իրենց միջև բաժանեն մշակույթը այնպես, որ էպիստեմոլոգիան իր վրա վերցնի լուրջ և կարևոր «ճանաչողական» մասի մասին հոգածությունը, իսկ հերմենևտիկան՝ մնացածի: Ռորտին դեմ է ինչպես այս ենթադրությանը, այնպես էլ այն պնդմանը, որ էպիստեմոլոգիայի և հերմենևտիկայի համապատասխան բնագավառների միջև գիծը հանդիսանում է «բնության մասին գիտության» և «մարդու մասին գիտության», կամ փաստի և արժեքի, կամ տեսականի ու փորձնականի, կամ «օբյեկտիվ գիտելիքի» և ավելի անհեթեթ ու անորոշի միջև տարբերակման հարց: Անհրաժեշտ է խուսափել նաև էպիստեմոլոգիայի և հերմենևտիկայի տարբերությունը որպես «մեզնից դուրս»-ի և «մեր կողմից պատրաստված»-ի տարբերություն դիտելուց: «Տարբերությունը կայանում է ծանոթության աստիճանի մեջ»[12]: էպիստեմոլոգներ կհամարվեն նրանք, ովքեր, հիանալի հասկանալով ինչ է կատարվում, այնուամենայնիվ ցանկանան օրինակարգել ամենն, ինչ տեղի է ունենում՝ հասկացումը խորացնելու, ամրացնելու, ուրիշներին հաղորդելու և նրանում հիմքեր ներմուծելու համար: Ռորտին կոչ է անում լինել հերմենևտիկներ, երբ չենք հասկանում ինչ է կատարվում, սակայն, լինելով բավականին ազնիվ, ընդունում ենք այդ հանգամանքը:

Հերմենևտիկան «անորմալ դիսկուրսի» հետազոտություն է մի որևէ «նորմալ դիսկուրսի» տեսանկյունից, փորձ է՝ որոշակի իմաստ հաղորդել նրան, ինչ տեղի է ունենում այն փուլում, երբ դեռ ամենքն այնչափ վստահ չեն հետազոտության արդյունավետության մեջ, որպեսզի նկարագրեն այն և դրանով էլ հենց սկսեն էպիստեմոլոգիական բացատրությունը: Ըստ էության, Ռորտիի փիլիսոփայական համակարգում սկզբունքորեն չի մերժվում էպիստեմոլոգիան և չի հակադրվում հերմենևտիկային, այլ ուղղակի կասկածի տակ է առնվում էպիստեմոլոգիական բացատրության անհրաժեշտությունն ու առաջնայնությունը տրվում է հերմենևտիկական ծանոթությանը՝ ճանաչողության տեսանկյունից վերջինիս ավելի օգտակարության առումով: «Հերմենևտիկան, ավելի շուտ, այն է, ինչ մենք ստանում ենք, երբ արդեն էպիստեմոլոգներ չենք...Եթե մենք բաժանման գիծ անցկացնենք այդ երկու գիտակարգերի միջև, ինչպես դա ես արեցի՝ որպես նորմալի և անորմալի մասին դիսկուրսների հակադրություն, ապա պարզ կլինի, որ էպիստեմոլոգիան և հերմենևտիկան չեն մրցակցում միմյանց հետ, ավելի շուտ՝ միմյանց օգնություն են ցույց տալիս»[13]:

Ռիչարդ Ռորտիի բազմաթիվ աշխատություններում բացահայտ կամ ոչ բացահայտ կերպով խոսվում է բարոյագիտական այնպիսի հասկացությունների մասին, ինչպիսին ազատությունն է, ազատ ընտրությունը և ճիշտ ընտրություն կատարելու համար համապատասխան ճաշակի առկայությունը:

---

[12] *Р.Рорти*, Философия и зеркало природы, с. 238.

[13] *Р.Рорти*, Философия и зеркало природы, с. 241-256.

Այս առումով, պատահական չէ, որ մտածողը, միանալով Գադամերին[14], խոսում է կրթության մասին և քանի որ ««կրթությունը» մի քիչ ծանծաղալի է հնչում, իսկ Bildung-ը՝ չափազաց օտարոտի»[15], գերադասում է օգտագործել «ուղղորդել» (edification) տերմինը՝ որպես «զրույցի նոր, ավելի լավ, ավելի հետաքրքիր եղանակի հայտնաբերման նախագծի անվանում»: Կրթական տեսանկյունից, ի հակադրություն էպիստեմոլոգիականի և տեխնիկականի, իրերի արտահայտման եղանակներն ավելի կարևոր են, քան ճշմարտություններին տիրելը: Մտածողն այստեղ համաձայնում է Գադամերի հետ, որ դաստիարակություն ստանալու և ճշմարտության հասնելու ցանկությունների միջև չկան այնպիսի տարաձայնություններ, որոնք պետք է վերացվեն: Եթե նույնիսկ կա կոնֆլիկտ, ապա դա կոնֆլիկտ է երկու հայացքների միջև, որոնցից առաջինը ուղղորդման միակ եղանակ է համարում մեզնից դուրս գտնվողի ճանաչողությունը, փաստի ճշգրիտ արտացոլումը, իսկ համաձայն երկրորդի՝ ճշմարտության որոնումը միայն մեկն է բազմաթիվ ուղիներից, որոնք կարող են մեզ ուղղորդել: Ռորտին միանում է Հայդեգերին, Սարտրին և Գադամերին, որոնք չմերժելով և հաճախ իրավամբ բարձր գնահատելով օբյեկտիվ հետազոտության նշանակությունը՝ այնուամենայնիվ գտնում են, որ այն տալիս է ինքներս մեզ նկարագրելու միայն որոշ միջոցներ, և դրանցից ոմանք էլ կարող են խանգարել դաստիարակման գործընթացին: Մենք կընկնենք ինքնախաբեության մեջ, եթե օբյեկտիվ և չեզոք հետազոտությունը դիտենք ոչ թե որպես նկարագրությունների լոկ ևս մեկ բազմություն, այլ արտոնյալ կարգավիճակ շնորհենք նրան իրականության հետ կապի տեսանկյունից: Ինչպես Սարտրն է նշում, աշխարհի և այդպիսով ինքներս մեր մասին օբյեկտիվ գիտելիքի ձեռք բերման փորձը սեփական նախագծի ընտրության համար պատասխանատվությունից խուսափելու փորձ է[16]: Հետևելով էկզիստենցիալ փիլիսոփայության ավանդույթին, որտեղ ի դեմս Սարտրի, վեր է բարձրացվում հետևյալ պնդումը՝ «...մարդն այն է, ինչ ինքն է իրենից պատրաստում»՝[17] Ռորտին բարձր է գնահատում կրթության և հատկապես ինքնակրթության դերը: Կրթություն, որտեղ կարևոր է ամենն, ինչ հանդիպում է այդ գործընթացի ընթացքում, քանի որ կրթությունն արդյունքը չէ, այլ հենց բուն գործընթացն է: «Նրա մեջ մտնում է ամեն-ինչ, ինչին նա հպվում է, և այդ ամենը մտնում է ոչ որպես միջոց, որը կորցնում է իր ֆունկցիաները»[18]:

Կրթական տեսանկյունից է, որ կարևորվում է հերմենևտիկական մոտեցումը և «անորմալ դիսկուրսների» միջոցով իրականացվող հետազոտությունը-

---

[14] Տե՛ս, *Հ.-Գ. Գադամեր*, Истина и метод.
[15] *R.Rorty*, Philosophy and the Mirror of Nature, p. 360.
[16] *Ռ.Ռորտի*, Философия и зеркало природы, с. 267.
[17] *Ж.П. Сартр*, Экзистенциализм-это гуманизм, //В кн. Сумерки богов, М., 1990, с. 323.
[18] *Հ.-Գ. Գադամեր*, Истина и метод, с. 53.

ները: Սակայն հերմենևտիկական տեսակետը, որտեղ ճշմարտության յուրացումը դառնում է ավելի պակաս կարևոր և դիտարկվում է որպես կրթության բաղադրատարր, հնարավոր է միայն դասական փիլիսոփայական ավանդույթին ծանոթ լինելու դեպքում: Հենց այստեղ է, որ իմացության տեսությունը քարկոծող փիլիսոփան գնահատում է իրականության հետազոտությունը՝ ի դեմս մշակույթի, որպես մեկնակետ: Առանց սեփական մշակույթի կողմից առաջարկվող աշխարհի որոշ նկարագրությունների ուսումնասիրության՝ անհնար է կրթված անհատ լինել: Հետագայում կարելի է ավելի քիչ ուշադրություն դարձնել իրականության հայելանման արտացոլման փորձերին, սակայն նախ պետք է չգիտակցված, հետո գիտակցված ձևով ընդունել այն դիսկուրսի կանոնները, որում ներառվում ենք, գոնե նրա համար, որպեսզի մտնելով «անորմալ դիսկուրսի» մեջ, գիտակցենք մեր անորմալությունը[19]:

Հաշվի առնելով ամենն, ինչ ասվեց դիսկուրսների ու դաստիարակության վերաբերյալ, հիշելով «համակարգային» և «ուղղորդող» փիլիսոփայությունների վերը նշված բաժանումը, և որ երկրորդն ընդամենը առաջինին ուղղված պատասխան հակազդեցություն է, որը կասկածներ է արտահայտում էպիստեմոլոգիայի հավակնությունների վերաբերյալ՝ կարելի է ի վերջո ենթադրել, որ հերմենևտիկան ոչ թե հակասում և գալիս է փոխարինելու էպիստեմոլոգիային, այլ խթան է հանդիսանում ու դրդում է ինքնանդրադարձ վերլուծություն (ռեֆլեկսիա) կատարել փիլիսոփայական համակարգում: Վերլուծություն, որի արդյունքն անհայտ է և կարող է հանգեցնել ոչ թե էպիստեմոլոգիայի մերժմանը, այլ փիլիսոփայական մտածողության համար նրա անփոխարինելիության հաստատմանը: Հստակ գիտակցելով, որ «անորմալ դիսկուրսը» միշտ մակաբուծում է «նորմալ դիսկուրսի», իսկ հերմենևտիկայի հնարավորությունը էպիստեմոլոգիայի հնարավորության վրա, և որ ուղղորդումը միշտ օգտագործում է ժամանակակից մշակույթի կողմից տրվող նյութերը՝ Ռիչարդ Ռորտին հայտարարում է.«Պնդել լինել հերմենևտիկ այնտեղ, որտեղ հարկ է էպիստեմոլոգ լինել...կրթության պակասի նշան է»[20]:

Չէ՞ որ կարևորը *պրակտիկ հետևանքներն* են[21], իսկ նպատակը, ոչ թե հիմնավորումը, այլ *ուղղորդումը*...

---

[19] Տե՛ս, *Р.Рорти*, Философия и зеркало природы.

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 271:

[21] Տե՛ս, *У. Джеймс*, Что такое прагматизм?